


Արևապաշտպան ակնոց

Օգտագործման հրահանգներ



Արևի լրիվ խավարում

Երկուշաբթի, 8-ը ապրիլի, 2024 թ.



TERMS AND CONDITIONS FOR USE OF ECLIPSE GLASSES

Please read these Instructions for Use carefully before using the Eclipse Glasses. Your purchase and use of the Eclipse Glasses constitutes your agreement to these Terms and Conditions. Failure to follow these Instructions for Use may result in serious personal injury, including permanent eye damage. If you do not understand these Instructions or cannot follow them diligently and completely, then you should not look at the Sun at any time, with or without the Eclipse Glasses.

The term “Eclipse Glasses” refers to the special cardboard-and-polymer optical products, marked “SAFE FOR DIRECT SOLAR VIEWING”, manufactured by Rainbow Symphony of Reseda CA or American Paper Optics of Bartlett TN, and sold by Eclipse2024.org for the purpose of viewing the Sun during the solar eclipse of April 8, 2024, by or under the direct supervision of a person 18 years of age or above and in accordance with these Instructions for Use.

Observing the Sun directly, without the benefit of eye protection provided by the Eclipse Glasses, will likely result in serious personal injury, up to and including permanent eye damage and blindness. When these Instructions for Use are followed completely and precisely, the undamaged and unmodified Eclipse Glasses have been proven to be safe and effective in allowing direct, short-term viewing of the Sun. If these Instructions for Use are not followed, or if damaged or modified Eclipse Glasses are used, permanent eye injury could result.

You should never look directly at the Sun, with or without the aid of the Eclipse Glasses, if you have any temporary or permanent medical or other condition which either (1) prevents your use of the Eclipse Glasses according to these Instructions for Use, or (2) which predisposes you to an increased or special risk of incurring, worsening, or contributing to the effects of any optical condition, or other medical, health, or other condition, by looking or attempting to look at the Sun.

You should never attempt to perform any other activity (such as driving or walking) while using the Eclipse Glasses.

You agree that if you allow others to use the Eclipse Glasses, you will provide each such user with a copy of these Instructions for Use and will make sure such user reads and understands the Instructions for Use before using the Eclipse Glasses.

By using the Eclipse Glasses to view the Sun, you agree with the following:

- (a) you understand these Instructions for Use completely;
- (b) you understand and accept the risks associated with improper use of the Eclipse Glasses;
- (c) you accept full responsibility for, and assume all risks associated with, the act of viewing the Sun, with or without the use of the Eclipse Glasses; and
- (d) the Eclipse Glasses are fragile, and any damage or modification will render them immediately and permanently unusable for their intended purpose.

Release and Limitation of Liability

By way of purchasing and using the Eclipse Glasses, you are irrevocably releasing, indemnifying, and holding harmless the manufacturer and seller from any liability, loss, claim and expense (including attorney’s fees), including but not limited to bodily injury or other personal harm, which may result from using the Eclipse Glasses under any circumstances or conditions and irrespective of jurisdiction. Neither the manufacturer nor the seller will be responsible for any damages of any kind, irrespective of reasons, conditions or circumstances, including malfunctioning of the Eclipse Glasses. All risks associated with using the Eclipse Glasses rest solely and entirely with the user, irrespective of whether the Eclipse Glasses are used by the original purchaser or any third party. You fully understand and assume the risks in using the Eclipse Glasses. You confirm that you have read this release of liability and fully understand its terms and that you have given up substantial rights by purchasing and using the Eclipse Glasses.

THE MANUFACTURER AND SELLER OF THE ECLIPSE GLASSES MAKE NO WARRANTY OF ANY KIND, EXPRESSED OR IMPLIED, WITH RESPECT TO THE ECLIPSE GLASSES, INCLUDING BUT NOT LIMITED TO THE IMPLIED WARRANTIES OF MERCHANTABILITY, FITNESS FOR A PARTICULAR PURPOSE, AND NON-INFRINGEMENT. NEITHER THE MANUFACTURER NOR THE SELLER SHALL BE LIABLE FOR ANY OTHER DAMAGES, INCLUDING BUT NOT LIMITED TO DIRECT, INDIRECT, INCIDENTAL, SPECIAL, CONSEQUENTIAL, OR EXEMPLARY DAMAGES, WHETHER IN AN ACTION IN CONTRACT OR TORT (INCLUDING NEGLIGENCE AND STRICT LIABILITY), SUCH AS, BUT NOT LIMITED TO, LOSS OF ANTICIPATED PROFITS OR BENEFITS RESULTING FROM, OR ARISING OUT OF, OR IN CONNECTION WITH THE USE OR FURNISHING OF THE ECLIPSE GLASSES OR THE PERFORMANCE, USE OR INABILITY TO USE THE SAME, EVEN IF THE MANUFACTURER OR SELLER HAS BEEN ADVISED OF THE POSSIBILITY OF SUCH DAMAGES. IN NO EVENT WILL THE MANUFACTURER’S OR SELLER’S TOTAL LIABILITY EXCEED THE PRICE PAID FOR THE PRODUCT.

Note Regarding Translations

[Translations](#) of these Instructions for Use into various languages are provided “AS-IS” and solely for the convenience of the reader. Eclipse2024.org has made reasonable efforts to ensure the accuracy of the Translations; however, in the event of any perceived discrepancy in meaning or interpretation between the English version and any Translation, the English version will prevail. You should not act in reliance on anything contained in any Translation of these Instructions for Use, but should refer to the official English version.


ԱՐԵՎԻ ԼՐԻՎ ԽԱՎԱՐՈՒՄ – 8-ը ապրիլի, 2024թ.

Բարի՛ գալուստ Հյուսիսային Ամերիկա!

Մենք երախտապարտ ենք, որ դուք ընտրել եք մեր երկիրը՝ Արևի լրիվ խավարմանը ականատես լինելու նպատակով, և ցանկանում ենք, որ բոլորը այս հրաշալի իրադարձությանը կարողանան հետևել միանգամայն ապահով պայմաններում:

*Օգտագործման հրահանգների հայերեն տարբերակը բերվում է ձեր հարմարավետության համար: Գործածման, կիրառման և կանոնների անգլերեն տարբերակը (այսուհետ՝ «Հրահանգներ») իրենից ներկայացնում է պաշտոնական փաստաթուղթ՝ արևի դիտման ժամանակ արևապաշտպան ակնոցի պատշաճ և ճիշտ օգտագործման վերաբերյալ ամբողջական տեղեկատվությամբ: Հրահանգները հասանելի են <https://tinyurl.com/2024Instructions> հղումով, և նախքան արևապաշտպան ակնոցի կիրառումը անհրաժեշտ է դրանք կարդալ, հասկանալ և հետևել խորհուրդներին: **Հրահանգներին չհետևելը կարող է հանգեցնել լուրջ ֆիզիկական վնասվածքների:***

2024 թ. ապրիլի 8-ի խավարումը աստղագետներն անվանել են «Լրիվ խավարում», բայց լրիվ խավարմանը ականատես լինելու համար դուք պետք է գտնվեք երկրագնդի շատ նեղ հատվածի սահմաններում, որն անցնում է Զյուսիսային Ամերիկայով (այն անվանվել է «լրիվ խավարման գոտի»): Եթե դուք չեք գտնվում այս գոտու տարածքում՝ ականատես կլինեք միայն արեգակի մասնակի խավարմանը: Հետևաբար, չափազանց կարևոր է իմանալ՝ արդյո՞ք դուք գտնվում եք այդ գոտու տարածքում, թե ոչ: Ստորև կդիտարկենք այն մեթոդը, ինչը ձեզ կօգնի դրանում:



Լրիվ խավարման գոտի

ՀԱՎԻՐՃ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄԱՆՐԱՄԱՄՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

«Արևապաշտպան ակնոց» տերմինը, անկախ այն բանից, թե այս փաստաթղթի որ բաժնում է կիրառվում, իրենից կներկայացնի նույն տերմինաբանությունը, ինչ առաջին էջում կամ այս փաստաթղթի որևէ բաժնում ներկայացված “Eclipse Glasses” տերմինը:

Արեգակին նայելիս արևապաշտպան ակնոցի կիրառման հրահանգների փաստաթուղթը իրավական համաձայնագիր է: Ցանկացած ժամանակ արևապաշտպան ակնոցից օգտվելիս դուք պետք է ճշգրիտ և ամբողջությամբ հետևեք բոլոր հրահանգներին: Եթե հրահանգները ձեզ համար անհասկանալի են, կամ եթե դուք չեք կարող ամբողջությամբ հետևել դրանց, կամ համաձայն չեք դրանց հետ, ապա ձեզ խորհուրդ չի տրվում հետևել արեգակին՝ նշված մեթոդների կիրառմամբ:

ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ԱԿՆՈՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱԿԻՐՃ ՈՒՂԵՅՈՒՅՑ

Ա

յս հակիրճ ուղեցույցը [մանրամասն հրահանգների հայերեն](#) օրինակի խտացված տարբերակն է, որը դուք պետք է կարդաք, հասկանաք և ամբողջությամբ կիրառեք խավարումը դիտելիս արևապաշտպան ակնոց օգտագործելու ընթացքում:

- 1) Ստուգեք ձեր տեղայնությունը հետևյալ հղումով՝ eclipse2024.org/find-times, տեսնելու՝ արդյո՞ք խավարումը ձեր վայրում ամբողջական կլինի, ինչպես նաև հասկանալու մասնակի և լրիվ (եթե տվյալ վայրը դրան համապատասխանում է) խավարման տարբեր փուլերի մոտավոր դիտարկման ժամերը:
- 2) Լրիվ խավարումը միանգամայն սպավորիչ իրադարձություն է, սակայն դուք դրան կարող եք ակնհաստես լինել միայն, եթե գտնվեք «լրիվ խավարման գոտում», որի լայնությունը մոտ երկու հարյուր կիլոմետր է: Եթե լրիվ խավարումը տեսանելի չէ ձեր նախօրոք պլանավորած դիտման վայրից, մենք թախանձագին խորհուրդ ենք տալիս ձեզ տեղափոխվել հենց այդ գոտու տարածքում գտնվող որևէ վայր:
- 3) Արևի խավարումը դիտելու նպատակով արևապաշտպան ակնոցից օգտվելիս սարքի տեսապակին պահեք ուղիղ ձեր աչքերի առջև այնպես, որ նրանք ամբողջովին պաշտպանված լինեն արևի ուղիղ ճառագայթներից:
- 4) Արևին նայելիս արևապաշտպան ակնոցից անհրաժեշտ է օգտվել հետևյալ պարագաներում.

ա. Եթե ձեր տեղանքում լինելու է **ՈՉ ԼՐԻՎ** խավարում, ապա արևապաշտպան ակնոցի օգնությամբ կարող եք հետևել խավարման ողջ ընթացքին: ԱՌԱՆՑ ԱՉՔԵՐԸ ՊԱՇՏԱԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԱՐԵՎԻՆ ՆԱՅԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԼՈՒՐՁ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼ ՁԵՐ ԱՉՔԵՐԻՆ:

բ. Եթե ձեր տեղանքում լինելու է **ԼՐԻՎ** խավարում, ապա դուք ՊԵՏՔ Է նայեք արևին միայն արևապաշտպան ակնոցի միջոցով, քանի դեռ տեսանելի էարևի սկավառակի անգամ շատ փոքր լուսավոր մասը: ԱՅՍ ՀՐԱՀԱՆԳԻՆ ՉԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԼՈՒՐՁ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼ ՁԵՐ ԱՉՔԵՐԻՆ:

գ. **ՄԻԱՅՆ ամբողջական խավարման կարճ ժամանակահատվածում**, երբ արևի սկավառակն ամբողջապես ծածկված է, կարող եք հետևել արևի լրիվ խավարման ընթացքին՝ առանց արևապաշտպան ակնոց կրելու:

- i. Իրականում, եթե փորձեք հետևել խավարման ընթացքին արևապաշտպան ակնոցի միջոցով հենց լրիվ խավարման ժամանակ՝ դուք բացարձակապես ոչինչ չեք տեսնի:
- ii. Դուք ՊԵՏՔ է նորից օգտվեք արևապաշտպան ակնոցից, հենց որ լրիվ խավարումն ավարտվի, և արևի ինչ-որ լուսավոր մաս նորից տեսանելի դառնա:









5) Այսպիսով՝

ԵԹԵ ՆՈՒՅՆԻՄԿ ԵՐԵՎՈՒՄ Է ԱՐԵՎԱԿՆԱՅԻՆ ՄԿԱՎԱՌԱԿԻ՝ ՊԱՅՏԱՌ ԼՈՒՍԱՐՁԱԿՈՂ ՄԻ ՓՈՔՐ ՄԱՍԸ՝ ԱՐԵՎԻՆ ՆԱՅԵԼԻՍ ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ՕԳՏՎԵՔ ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ԱԿՆՈՑԻՑ:

ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ԱՎԵՆՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Նախ և առաջ ծանոթանանք որոշ տերմինների բացատրությանը:

Երկրագնդի յուրաքանչյուր կետում յուրաքանչյուր խավարման ընթացքում ըստ ժամանակի դրսևորվող կարևոր իրադարձությունները ստացել են բնորոշիչ անուններ: Դրանք են՝

Իրադարձության անվանումը	Իրադարձության նկարագրությունը	Իրադարձության պատկերը (լրիվ խավարման ժամանակ)	Իրադարձության պատկերը (մասնակի խավարման ժամանակ)
C1	Մասնակի փուլի սկիզբը		
C2	Լրիվ խավարման սկիզբը		** Չի՛ դիտվում! **
Մաքսիմալ փուլ	Խավարման գագաթնակետը		
C3	Լրիվ խավարման ավարտը		** Չի՛ դիտվում! **
C4	Մասնակի փուլի ավարտը		

1) ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ԱԿՆՈՑԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ



- 1) [Էթե անհրաժեշտ է] Զգուշորե՛ն բացեք արևապաշտպան ակնոցի փաթեթավորումը:
- 2) Ակնոցը պահե՛ք ապահով պայմաններում:
- 3) Յուրաքանչյուր օգտագործումից առաջ ստուգե՛ք արևապաշտպան ակնոցը. Եթե տեսապակին ճմրթվել կամ վնասվել է, ապա ոչնչացրե՛ք ակնոցը և [ձեռք բերեք նորը](#):
- 4) Եթե տեսապակին որևէ կերպ վնասվել է, երբեք մի՛ կիրառեք այն:
- 5) Մի՛ առանձնացրեք տեսապակու երիզը ակնոցից, և երբեք մի՛ կիրառեք առանձնացված տեսապակին արևին նայելու ընթացքում ճառագայթումից պաշտպանվելու նպատակով:



6) Արևապաշտպան ակնոցի ճիշտ տեղադրված, չվնասված տեսապակին կպաշտպանի աչքերը արևի վնասակար պայծառ լույսից, ինչպես նաև ուլտրամանուշակագույն և այլ վտանգավոր ճառագայթներից: Հետևաբար, սույն հրահանգում բերված կանոնները պահպանելու պարագայում արևապաշտպան ակնոցի օգտագործումը արևի խավարման փուլերին հետևելիս միանգամայն անվտանգ է: Հիշե՛ք, որ չկան հատուկ «խավարման փուլի արևային ճառագայթներ», որոնք ավելի կամ պակաս վնասակար են:

7) Դուք պետք է օգտագործեք արևապաշտպան ակնոցը տվյալ ուղեցույցում նշված կանոններին համապատասխան, որպեսզի, չվնասելով ձեր առողջությունը, հետևեք արևի փուլերին՝ անկախ արեգակնային սկավառակի պայծառ լուսավորված տեսանելի շերտի չափերից: Սա վերաբերում է խավարման ժամանակ ցանկացած դիտման («C2»-ին և «C3»-ին ինչպես նկարագրվել էր ավելի վաղ), անկախ այն բանից, թե ինչ էք իմացել այլ աղբյուրներից:

8) Արևապաշտպան ակնոցը երբեք մի՛ գործածեք աստղադիտակի, հեռադիտակի, տեսախցիկի, օպտիկական ապակիների, հայելու կամ որևէ այլ օպտիկական գործիքի կամ լույսը ցրող կամ անդրադարձնող ցանկացած սարքի հետ համատեղ («օպտիկական սարք»):

9) Երբեք մի՛ պահեք այդպիսի օպտիկական սարքը ուղիղ դեպի արևը, և երբեք մի՛ նայեք արևին օպտիկական սարքի միջոցով, որն անմիջապես ուղղված է դեպի այն և կամ որևէ ձևով հավաքում, ցրում կամ անդրադարձնում է լույսը:

10) Թույլ մի՛ տվեք, որ արևապաշտպան ակնոց կրեն կենդանիները կամ ժամանակավորապես անգործունակ մարդիկ, ինչպես նաև նրանք, ովքեր ի վիճակի չեն կարդալու, հասկանալու և կիրառելու արևապաշտպան ակնոցի անվտանգ օգտագործմանը վերաբերող պահանջները կամ իրավաբանական պատասխանատվություն կրելու իրենց գործողությունների հետևանքների համար:



11) Ինչպե՞ս օգտագործել արևապաշտպան ակնոցը.

Արևապաշտպան ակնոցը դրե՛ք աչքերին: Արևին նայե՛ք ակնոցի հատուկ տեսապակու միջով՝ համոզվելով, որ այն վնասված չէ: Արևի ուղիղ ճառագայթներին նայելիս երբեք մի՛ հանեք արևապաշտպան ակնոցը: Եթե ձեր արևապաշտպան ակնոցը ստվարաթղթե է, ծալեք ստվարաթղթի ծայրերը և նրան ակնոցի ձև տվեք, ապա կրեք այն՝ ինչպես սովորական ակնոցը: Խավարման փուլերի ընթացքում արևին նայե՛ք միայն չվնասված արևապաշտպան ակնոցի օգնությամբ, բացառությամբ արևի լրիվ խավարման փուլի (սա համընկնում է ստորև բերված աղյուսակում ներկայացված «C2» և «C3» փուլերի միջև ընկած մասին, եթե ձեր տեղանքում տվյալ փուլերը դիտվում են):


12) Մի՛ օգտագործեք որևէ այլ նյութ կամ առարկա, բացի արտադրողի կողմից ակնոցի շրջանակի վրա տեղադրված տեսապակուց, արևին նայելիս աչքերը պայծառ լույսից պաշտպանելու համար:

13) Հարցերի դեպքում կապ հաստատեք [Eclipse2024.org](https://tinyurl.com/glasses-questions)-ի հետ <https://tinyurl.com/glasses-questions> հղումով:

1) ՃՇՏԵՔ ԱՐԵՎԻ ԽԱՎԱՐՄԱՆ ՓՈԻԼԵՐԻ ՍՏՈՒՅԳ ԺԱՄԱՆԱԿԸ ՁԵՐ ՏԵՂԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Հիմնվելով ձեր տեղանքի համար eclipse2024.org/find-times հղումով ներկայացված տվյալների վրա, ընտրեք հետևյալ դրույթներից մեկը՝

Իմ տեղանքի համար խավարումը լինելու է՝

















(ընդգծեք ձեզ համապատասխանողը)

<p>Եթե ձեր տեղանքում խավարումը ԼՐԻՎ է, օգտվեք հետևյալ վերնագրով հրահանգներից՝</p> <p>«ԽԱՎԱՐՈՒՄԸ ԼՐԻՎ Է ԻՄ ՏԵՂԱՆՔՈՒՄ»</p> <p>անցնել հղմանը</p>	<p>Եթե ձեր տեղանքում խավարումը ՈՉ ԼՐԻՎ է, օգտվեք հետևյալ վերնագրով հրահանգներից՝</p> <p>«ԽԱՎԱՐՈՒՄԸ ՈՉ ԼՐԻՎ Է ԻՄ ՏԵՂԱՆՔՈՒՄ»</p> <p>անցնել հղմանը</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

**** ԻՍ ՏԵՂԱՆՔՈՒՄ ԼՐԻՎ ԷԽԱՎԱՐՈՒՄ ****

Ձեր տեղանքը գտնվում է «լրիվ խավարման գոտում», և դուք ականատես եք լինելու հազվագյուտ և հրաշալի երևույթի: Չափազանց կարևոր է հստակ իմանալ արևի լրիվ խավարման ստույգ ժամանակը ձեր տեղանքի համար: Դա կարող էք անել ստորև բերված աղյուսակում տվյալների մուտքագրման օգնությամբ: Դուք ականատես կլինեք լրիվ խավարման փուլին, երբ Արևն ամբողջությամբ կծածկվի Լուսնի սկավառակի ետևում:

- 1) Օգտվելով ձեր տեղանքի համար eclipse2024.org/find-times հղումով ներկայացված տվյալներից՝ աղյուսակում լրացրե՛ք խավարման յուրաքանչյուր փուլի մոտավոր ժամանակը (չմոռանաք [համաձայնեցնել ժամանակը](#) ձեր ժամային գոտու հետ):

<i>Մինչ C1-ը</i>	* Խավարում չկա*				Դուք ՊԵՏՔ Է կրեք արևապաշտպան ակնոց
C1	Մասնակի փուլը սկսվում է՝				Դուք ՊԵՏՔ Է կրեք արևապաշտպան ակնոց
C2	Ամբողջ-ական փուլը սկսվում է՝				C2-ի ավարտից հետո , դուք կարող եք չկրել արևապաշտպան ակնոց
<i>Մաքսիմալ փուլ</i>	Դիտվում է՝				ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՀԵՏԵՎԵԼ ԱՅՍ ՓՈՒԼԻՆ ԱՌԱՆՑ ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆԱ ԿՆՈՑԻ
C3	Ամբողջ-ական ավարտվում է՝				Դուք ՊԵՏՔ Է նորից կրեք արևապաշտպան ակնոց
C4	Մասնակի ավարտվում է՝				Դուք ՊԵՏՔ Է կրեք արևապաշտպան ակնոց
<i>C4-ից հետո</i>	* Խավարում չկա*				Դուք ՊԵՏՔ Է կրեք արևապաշտպան ակնոց

- 2) Չնայած գտնվում եք «լրիվ խավարման գոտում»՝ դուք, այնուամենայնիվ, ՊԵՏՔ Է կրեք արևապաշտպան ակնոց խավարման «C2»-ից առաջ և «C3»-ից հետո ընկած փուլերի ընթացքում, այսինքն՝ քանի դեռ խավարումը լրիվ չէ:

- 3) Դուք կարող եք նայել արևին առանց արևապաշտպան սարքի ՄԻԱՅՆ հետևյալ երեք պայմանների միաժամանակ պահպանման պարագայում՝

Ա. եթե խավարումը ձեր տեղանքում լրիվ է (այսինքն՝ եթե դուք գտնվում եք «լրիվ խավարման գոտու» տարածքում), ԵՎ

Բ. լրիվ խավարման փուլի ընթացքում (մոտավորապես ձեր տեղանքում «C2»-ի և «C3»-ի միջև ընկած ժամանակահատվածում, որը պետք է նշեք բերված աղյուսակում), ԵՎ

Գ. երբ արեգակի պայծառ սկավառակը ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ծածկված է լուսնի սկավառակով:

Լրիվ խավարման փաստացի ժամանակը էականորեն տարբերվում է՝ կախված գտնվելու վայրից, այդ պատճառով չափազանց կարևոր է նախօրոք հստակեցնել մոտավոր ժամանակը: Հիշեցնենք, որ նշված ժամը խիստ մոտավոր է:

- 4) Այսպիսով, անկախ վերոբերյալ աղյուսակում փուլերի համար նշված ժամերից կամ այդ ժամերի մասին ցանկացած այլ աղբյուրից ձեր քաղաք տեղեկություններից, **դուք պետք է միշտ արևին նայելիս կրեք արևապաշտպան ակնոցը, քանի դեռ տեսանելի է արեգակնային սկավառակի ԱՆԳԱՄ ՉՆՉԻՆ ՄԱՍԸ:**
- 5) Մոյն հրահանգը ուղեկցվում է գրաֆիկական հավելումներով՝ առավել ըմբռնելի լինելու համար:

Դուք պետք է ուշադիր կարդաք, հասկանաք և հետևողականորեն ենթարկվեք հետևյալ հրահանգներին՝











ԵՍ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՄ ՀԵՏԵՎԵԼ ԲՈՂՈՐ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻՆ՝ ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ԱԿՆՈՑԻ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ:

ԵԹԵ ԽԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐԵԳԱԿԻ ՄԿԱՎԱՌԱԿԻ ՈՐԵՎԷ ՄԱՍ ՏԵՄԱՆԵԼԻ Է, ԵՍ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՄ ԱՐԵՎԻՆ ՆԱՅԵԼԻՄ ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ԱԿՆՈՑ ԿՐԵԼ:

**** ԻՍ ՏԵՂԱՆՔՈՒՄ ՈՉ ԼՐԻՎ Է ԽԱՎԱՐՈՒՄ ****

Ձեր տեղանքը չի գտնվում «լրիվ խավարման գոտում», և դուք հնարավորություն չեք ունենա լիովին ակնաստես լինելու այս հազվագյուտ երևույթին: (Մենք թախանձագին խորհուրդ ենք տալիս ձեզ տեղափոխվել լրիվ խավարման գոտու տարածքում գտնվող որևէ վայր՝ որպեսզի հնարավորություն ունենաք լիովին վայելելու այս հրաշալի իրադարձությունը):

- 1) Օգտվելով ձեր տեղանքի համար eclipse2024.org/find-times հղումով ներկայացված տվյալներից՝ աղյուսակում լրացրեք խավարման յուրաքանչյուր փուլի մոտավոր ժամանակը (չմոռանաք [համաձայնեցնել ժամանակը](#) ձեր ժամային գոտու հետ):

<i>Մինչ C1-ը</i>	* Խավարում չկա*				Դուք ՊԵՏՔ Է կրեք արևապաշտպան ակնոց
C1	Մասնակի փուլը սկսվում է՝				Դուք ՊԵՏՔ Է կրեք արևապաշտպան ակնոց
<i>Մաքսիմալ փուլ</i>	Դիտվում է				Դուք ՊԵՏՔ Է կրեք արևապաշտպան ակնոց
C4	Մասնակի փուլը ավարտվում է՝				Դուք ՊԵՏՔ Է կրեք արևապաշտպան ակնոց
<i>C4-ից հետո</i>	* Խավարում չկա*				Դուք ՊԵՏՔ Է կրեք արևապաշտպան ակնոց

(Ուշադրություն՝ ն., «C2» և «C3» փուլերը բացակայում են, քանի որ ձեր տեղանքում խավարումը ոչ լրիվ է)

- 2) Քանի որ ձեր տեղանքում խավարումը ոչ լրիվ է, դուք պետք է արևին նայելու ժամանակ ՄԻՇՏ զինված լինեք արևապաշտպան ակնոցով: Եվս մեկ անգամ հորդորում ենք տեղափոխվել լրիվ խավարման գոտու տարածք: Չմոռանաք ձեզ հետ վերցնել արևապաշտպան ակնոցը, որպեսզի կարողանաք անվտանգ հետևել մասնակի խավարման փուլերին:
- 3) Մոյն հրահանգները ուղեկցվում են գրաֆիկական հավելումներով՝ ավելի ըմբռնելի լինելու համար:

Դուք պարտավոր եք կարդալ, հասկանալ և հետևողականորեն ենթարկվել հետևյալ հրահանգներին՝

ԵՄ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՄ ՀԵՏԵՎԵԼ **ԲՈՒՈՐ** ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻՆ՝ ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ԱԿՆՈՑԻ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ:

ԵՄ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՄ ԱՐԵՎԻՆ ՆԱՅԵԼԻՄ ՄԻՇՏ ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ԱԿՆՈՑ ԿՐԵԼ:



PDF

հայերեն

GRAN ECLIPSE NORTEAMERICANO
GRANDE ÉCLIPSE NORD - AMÉRICAINÉ
GREAT NORTH AMERICAN ECLIPSE

